Գործ ԵԴ թիվ 3841/02/23

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույցներ պահանջելու մասին

07 փետրվարի 2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Բաղիրյանս, քննության առնելով ըստ հայցի «Սասունասար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ պատասխանող Երևանի քաղաքապետարանի՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Սասունասար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող Երևանի քաղաքապետարանի՝ խնդրելով անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի և «Սասունասար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 21.06.2022թ. կնքված «ԵՔ-ԲՄԱԾՁԲ-22/59-1» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Հակոբ Բալայանի կողմից միակողմանի լուծելու մասին որոշումը:

Միաժամանակ «Սասունասար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչը միջնորդել է սույն գործը քննել դատական նիստում՝ նկատի ունենալով, որ հայցվորն իր խախտված իրավունքներն ավելի արդյունավետ կիրականացնի դատական նիստում:

Հայցադիմումը 31.01.2023 թվականին մակագրվել է դատավոր Ա. Բաղիրյանին, դատավորին է հանձնվել 01.02.2023 թվականին:

Սույն հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ կետերի համաձայն՝

1. դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

2. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Դատարանը գտնում է, որ պատասխանող Երևանի քաղաքապետարանից անհրաժեշտ է պահանջել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/59» ծածկագրով գնման ընթացակարգի հետ կապված, ինչպես նաև այդ ընթացակարգի արդյունքում «Սասունասար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/59-1» ծածկագրով պայմանագրի վերաբերյալ՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Միաժամանակ, դատարանը գտնում է, որ «Սասունասար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցչի միջնորդությունը ենթակա է բավարարման, և սույն գործն անհրաժեշտ է քննել դատական նիստում:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.6-րդ և 234.9-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Սասունասար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող Երևանի քաղաքապետարանից պահանջել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/59» ծածկագրով գնման ընթացակարգի հետ կապված, ինչպես նաև այդ ընթացակարգի արդյունքում «Սասունասար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/59-1» ծածկագրով պայմանագրի վերաբերյալ՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Սույն որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

CamScanner

3. «Սասունասար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցչի միջնորդությունը բավարարել.

ԵԴ թիվ 3841/02/23 քաղաքացիական գործով դատական նիստ նշանակել 2023 թվականի մայիսի 11-ին, ժամը 16:45-ին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիրի նստավայրում /հասցե՝ Հր. Ներսիսյան 10/:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ԲԱԴԻՐՅԱՆ

CamScanner